յս պահեսցէ զինքն յամայր ամս ժամանակաց յարգոյ և բարգաւաճ փառաւք. ամէն» *։

Ավելի մանրամասնություններ Ամիր-Հասանի մասին ստանում ենք ճիշդ նույն թվականին Ոծոփի վանքում գրված ավետարանի ընդարձակ հիշատակարանից, վորից մի փոքրիկ հատված մեջ բերինք Պապաքի մասին խոսելիս. Ամիր-Հասանն այստեղ կոչված է «մեծ սպարապետ տանն Աւագին, որդւոյ Իվանէ աթաբակին». «ասպարապետ հայոց» է կոչված նաև Թաճերի արձանագրության մեջ, Թանահտի վանքի դրան գլխին։ Հիշատակարանի համաձայն Ամիր-Հասանի մահը հանդիպեց 1292 թվին, սգի մեջ ձգելով աշխարհն ու յուր զորքը. նա «ի բազում պատերազմունս» քաջի անուն եր ժառանգել, Հուլաղուի (1256—1265) և Ապաղայի (1265—1282) պալատում նվերների և պատվի արժանացել. «այնպէս սիրեցեալ էր ի նոցանէ վասն արիական քաջութեան և խոհեմութեան իւրոյ մինչև զինակիր և յառաջադէմ լեալ յամենայն գործս արքունի։ Եւ յանձնէ իւրեանց բազում անգամ զարդարեցին զնա ոսկէհուռ դիպակաւք և կամար ոսկեղէն ընդելուզեալ ակամբք և մարգարտօք կապեալ ի մէջս նորա» **։ Հայ իշխաններին սիրաշահելու մի միջոց եր այդ ընդհանրապես Թաթարների կողմից. գրեթե նման խոսքերով Որբելյան նկարագրում է Ապաղայի պարգևատրությունը Տարսայիճին[1]։ Ամիր-Հասանի քաջության հռչակը տարածված եր մինչև հռոմայեցոց և յունաց աշխարհը, հավանորեն այն արշավանքների ժամանակ, վոր Թաթարները ձեռնարկում էին դեպի արևմուտք, և վորոնց, գուցե, նա մասնակից եր յեղել, ինչպես յերբեմն յուր հայրը։ Հիշատակարանի հեղինակը նորա մահը նշանակում է «մինչչև էր հասեալ ի հասակ ծերութեան», համենայն դեպս վոչ անց հիսունից, ի նկատի ունենալով, վոր նորա անդրանիկ և միակ վորդի Էյշին՝ ծնված եր 1268—1273 թ.թ. մեջ։ Շմավոն գրիչը հայտնում է ձեռագրի մասին, թե «ըստ իմում կարի զարդարեցի ոսկւով և արծաթով, ոսկեգիծ դրվատով և ծաղկերանգ գովնով, և պաճուճեցի ներքոյ և արտաքոյ, ընտելուղեալ քարամբք պատուականաւք և լուսափայլ մարգարտօք»։ Այս շքեղությունը կազմին է վերաբերում, մանրանկարները և գրչությունը մի-ջակ եր, վոր տեսել ենք անձամբ ակադեմիկ Մառի մոտ, յերբ նրան եր ուղարկված գնահատելու։



Ձեռ. Եջմ. Ն. 8. № 1669. 218բ. **Պատկեր 59.**

Յերբ մեռավ իշխանուհի Թաճերը, չգիտենք. նա կենդանի եր դեռևս 1307 թ., յերբ գրեց յուր արձանագրությունը Թանահտի վանքի արևմտյան դրան կամարակալ քարի վրա (Հավել. Ա. 18. գ. պատկ. 60). այստեղ նա իրեն անվանում է Թաճեր «դուստր Ուքանա, ամուսին Հասանա ասպարապետին հոց (հայոց) որդոյն Պռոշա», տալով ընծա «ի հալալ ընչից իմոց հայրենի տանս մեր Թանատի վանաց», և փոխարենն ստանալով չորս պատարագ։ Արձանագրության վերջին բառը տարաբաղդաբար չի դուրս յեկել մեր նկարի մեջ։

* Ձեռագրի (№ 1669 Ն. 8.) կազմը տախտակ է, կաշով պատած, 32×26×9 սմ. մեծությամբ. յերեսը յեղել է կոստղած, վորից միայն նշաններ են մնացել։ Կաշին էլ զարդարված է (ճնշմամբ) գեղեցիկ խաչով և որնամենտներով, բայց վոչ գրության ժամանակից։

** Այս ավետարանի մասին տ. Изв. Имп Ак. Наук. 1909. I. А. Орбели. Ի'Асан Джалал 433. Հիշատակարանը տպված է Արարատի մեջ. 1876. 412։

1 Որբ. 423։